ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԻԱՆՆԱ ԼԵՎՈՆԻ

«ՀՀ ԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԵԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ»

ԻԳ.00.01 – «Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ
քաղաքական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2026

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АРУТЮНЯН МАРИАННА ЛЕВОНОВНА

«КОНЦЕПТУАЛЬНЫЕ ОСНОВЫ ОБРАЗОВАТЕЛЬНОЙ ПОЛИТИКИ РА В КОНТЕКСТЕ ФОРМИРОВАНИЯ ИНФОРМАЦИОННОГО ОБЩЕСТВА»

Диссертация на соискание ученой степени кандидата
политических наук по специальности
23.00.01 – «Теория политической науки»

АВТОРЕФЕРАТ

ЕРЕВАН - 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Ռուս-Հայկական համալսարանում:

Գիտական ղեկավար՝
փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ավետիսյան Պարգև Սերգեյի**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝
քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Աթանեսյան Արթուր Վլադիմիրի**
քաղաքական գիտությունների թեկնածու, ասիստենտ **Խոջայան Կարինե Գագիկի**

Առաջատար կազմակերպություն՝ **Երևանի «Գլաձոր» համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2026 թվականի օգոստոսի 28-ին՝ ժամը 13:00-ին, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդում:
Մասնագիտական խորհրդի հասցեն՝ ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում:
Սեղմագիրն առաքվել է 2026 թ. հունիսի 15-ին:

ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի 056 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, քաղաքական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Սարգսյան Առնակ Գեորգիի**

Тема диссертации утверждена в Российсо-Армянском университете.

Научный руководитель:
доктор философских наук, профессор **Аветисян Паркев Сергеевич**
Официальные оппоненты:
доктор политических наук, профессор **Атанесян Артур Владимирович**
кандидат политических наук, ассистент **Ходжаян Карине Гагиковна**

Ведущая организация: **Ереванский университет «Гладзор»**

Защита диссертации состоится 28 августа 2026 г. в 13:00 на заседании специализированного совета 056 «Политология и международные отношения» КВОН МОНКС РА, действующего по адресу ул. А. Манукяна 1, 0025, г. Ереван, РА.
С диссертацией можно ознакомиться в библиотеке имени Саркиса и Мари Измирлянов ЕГУ РА.
Автореферат разослан 15 июня 2026 г.

Ученый секретарь специализированного совета
056 КВОН МОНКС РА,
кандидат политических наук, доцент **Саргсян Арнак Георгиевич**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է տեղեկատվական հասարակության ձևավորման համատեքստում հասարակական զարգացման կառուցվածքային խորքային վերափոխումներով: Այդ գործընթացները էականորեն փոխակերպում են ոչ միայն տեխնոլոգիական ոլորտը, այլ նաև հասարակության քաղաքական և հաղորդակցական կազմակերպումը, կառավարման մեխանիզմները, քաղաքական մասնակցության ձևերը և սոցիալական փոխազդեցության մոդելները: Նշված պայմաններում կրթությունը վերածվում է պետական քաղաքականության ռազմավարական ռեսուրսի՝ ստանձնելով քաղաքացիական գիտակցության ձևավորման և սոցիալ-քաղաքական համակարգի կայունության վերարտադրության հիմնարար գործառույթներ:

Ժամանակակից տեղեկատվական հասարակությունը բնութագրվում է տեղեկատվության հասանելիության ընդլայնմամբ և միաժամանակ տեղեկատվական ռիսկերի աճով՝ մասնավորապես տեղեկատվական մանիպուլյացիաների տարածմամբ, հանրային գիտակցության հատվածայնացմամբ և պետական ինստիտուտների նկատմամբ վստահության նվազումով: Այս միտումները պայմանավորում են քաղաքացիների կողմից տեղեկատվության քննադատական ընկալման, հանրային-քաղաքական գործընթացներին գիտակցված մասնակցության և պատասխանատու սոցիալական վարքի ձևավորման անհրաժեշտությունը: Այդ համատեքստում կրթական քաղաքականությունը ձեռք է բերում հստակ արտահայտված քաղաքական-նորմատիվ բնույթ՝ ուղղված քաղաքական կարգի արժեքային և ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորմանը:

Կրթական քաղաքականության այս քաղաքական-նորմատիվ գործառույթն առավելապես իրացվում է սոցիալ-հումանիտար գիտությունների ոլորտում: Հենց այդ գիտությունների շրջանակներում ձևավորվում են սոցիալական և քաղաքական իրականության մեկնաբանման մոդելներ, ինչպես նաև քաղաքացիական մշակույթի և սոցիալական պատասխանատվության հիմնարար բաղադրիչներ:

Նկարագրված մարտահրավերներն առանձնահատուկ սրությամբ են արտահայտվում Հայաստանի Հանրապետությունում: Մասնավորապես, առկա է անհամապատասխանություն սոցիալ-քաղաքական վերափոխումների դինամիկայի և կրթական համակարգի ադապտացիոն կարողությունների միջև, ինչի արդյունքում կրթական համակարգը շարունակում է պահպանել իներտությունը և լիարժեք չի արձագանքում տեղեկատվական հասարակության

պահանջներին: Այս հանգամանքը դրսևորվում է կրթության և աշխատաշուկայի, ինչպես նաև գիտելիքահեն տնտեսության միջև կապի թուլացմամբ, ինչը սահմանափակում է մարդկային կապիտալի զարգացման ներուժը:

Ձևավորվում է հակասություն տեղեկատվական հասարակության պահանջների և կրթական քաղաքականության առկա բովանդակության ու գործառնական արդյունավետության միջև, որը լիարժեք չի ապահովում քաղաքական և քննադատական կարողություններով օժտված քաղաքացու ձևավորումը: Նշված հակասությունը պայմանավորում է կրթական քաղաքականության քաղաքագիտական համալիր վերլուծության անհրաժեշտությունը՝ որպես սոցիալ-քաղաքական կայունության ապահովման առանցքային գործոնի:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Թեմայի գիտական մշակվածության աստիճանը պայմանավորված է դրա միջառարկայական բնույթով. կրթական քաղաքականության հիմնախնդիրը ուսումնասիրվել են քաղաքագիտության, սոցիոլոգիայի, փիլիսոփայության և մանկավարժության շրջանակներում: Սակայն գիտական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ, չնայած առանձին ուղղություններով իրականացված բազմաթիվ ուսումնասիրություններին, կրթական քաղաքականության ամբողջական քաղաքականագիտական վերլուծությունը տեղեկատվական հասարակության պայմաններում մնում է ոչ լիարժեք մշակված:

Կրթական քաղաքականության տեսամեթոդաբանական հիմքերը ձևավորվել են դասական սոցիոլոգիական և քաղաքական տեսությունների շրջանակում՝ Թալքոթ Փարսոնսի [1], Էմիլ Դյուրկհեյմի [2], Պիեռ Բուրդիեի [3] աշխատություններում: Տարբեր մեթոդաբանական մոտեցումների շրջանակում այն դիտարկվել է կոնստրուկտիվիզմի (Պիտեր Բերգեր, Թոմաս Լուկման [4]),

---

[1] Парсонс Т. О социальных системах. – М.: Академический проект, 2002. – 830 с.

[2] Дюркгейм Э. Социология образования / под ред. В. С. Собкина, В. Я. Нечаева. – М.: ИНТОР, 1996. – 87 с.

[3] Бурдье П. Социология политики / пер. с фр.; сост., общ. ред. и предисл. Н. А. Шматко. – М.: Socio-Logos, 1993. – 336 с.

[4] Бергер П., Лукман Т. Социальное конструирование реальности: трактат по социологии знания. – М.: Медиум, 1995. – 97 с.

ինստիտուցիոնալիզմի (Թորսթեյն Վեբլեն[5]) և համակարգային վերլուծության (Թալքոթ Փարսոնսի[6]) տեսանկյուններից:

Ռուսաստանյան գիտական դպրոցում կրթական քաղաքականության և կրթության պետական կառավարման հիմնախնդիրները ուսումնասիրվել են Լ. Ա. Միկեշինայի[7], Ն. Ի. Բուլաևի[8] և այլոց աշխատություններում:

Տեղեկատվական հասարակության տեսությունը և դրա ազդեցությունը կրթության վրա ուսումնասիրվել են Դենիել Բելի[9], Էլվին Թոֆլերի[10], Մանուել Կաստելսի[11] աշխատություններում: Թվայնացման պայմաններում ժամանակակից հասարակության փոխակերպումները ուսումնասիրվում են Է. Գիդենսի[12], Շ. Զուբոֆի[13], Ու. Բեկի[14] աշխատություններում:

Քաղաքացիական կրթության և դրա ձևավորման գործում պետության դերի հարցերը դիտարկվում են Ա. Գուտմանի, Մ. Նուսբաումի, Թ. Ֆրիդմանի և այլոց աշխատություններում: Հայաստանի Հանրապետությունում կրթական քաղաքականության քաղաքական-պատմական և ինստիտուցիոնալ զարգացման հարցերը ուսումնասիրվել են Ս. Ս. Արևշատյանի[15], Կ. Ա. Միրումյանի[16], Օ. Լ.

---

[5] Веблен Т. Теория праздного класса: экономическое исследование институций. – М., 1984. [Электронный ресурс]. – URL: https://gtmarket.ru/library/basis/5890 (дата обращения: 08.11.2025).

[6] Парсонс Т. Система современных обществ / пер. с англ. Л. А. Седова, А. Д. Ковалева; под ред. М. С. Ковалевой. – М.: Аспект Пресс, 1998. – 270 с.

[7] Микешина Л.А. Философия познания. Полемические главы. М.: Прогресс-Традиция, 2002. 624 с.

[8] Булаев Н. И. Государственное управление развитием системы отечественного образования: монография. СПб.: Изд-во РГПУ им. А. И. Герцена, 2006. 349 с.

[9] Белл Д. Грядущее постиндустриальное общество: опыт социального прогнозирования / пер. с англ. – 2-е изд., испр. и доп. – М.: Academia, 2004. – 788 с.

[10] Тоффлер Э. Метаморфозы власти / пер. с англ. – М.: АСТ, 2003. – 669 с.

[11] Кастельс М. Галактика Интернет: размышления об интернете, бизнесе и обществе. – Екатеринбург: У-Фактория, 2004. – 328 с.

[12] Гидденс Э. Последствия современности / пер. с англ. – М.: Праксис, 2011. – 352 с.

[13] Зубофф Ш. Эпоха надзорного капитализма: битва за человеческое будущее на новых рубежах власти / пер. с англ. – М.: Изд-во Института Гайдара, 2022. – 784 с.

[14] Бек У. Общество риска: на пути к другому модерну. – М.: Прогресс-Традиция, 2000. – 222 с.

[15] Аревшатян С. С. Формирование философской науки в Древней Армении (V–VI вв.). – Ереван: Изд-во АН Арм. ССР, 1973. – 350 с.

[16] Мирумян К. А. Антология армянской педагогической мысли с древнейших времен до XVIII века. – Ереван: Изд-во РАУ, 2019. – 684 с.

Սարգսյանի[17], Ա. Պ. Ենգոյանի[18] և այլոց աշխատություններում: Կրթության համակարգի բարեփոխումների և տեղեկատվականացման հիմնախնդիրները ներկայացված են Պ. Ս. Ավետիսյանի[19], Լ. Օ. Մկրտչյանի[20]աշխատություններում: Կրթական քաղաքականության արժեքային և սոցիալ-քաղաքական կողմնորոշումները դիտարկվել են Ա. Ս. Ալեքսանյանի[21], Է. Գ. Օրդուխանյանի[22], Կ. Սարոյանի[23] և այլոց կողմից:

Ուսումնասիրության կիրառական հիմքը: Ուսումնասիրության կիրառական (էմպիրիկ) հիմքը կազմում են Հայաստանի Հանրապետությունում կրթական քաղաքականության ձևավորման և զարգացման գործընթացները կարգավորող նորմատիվ-իրավական ակտերը, ռազմավարական փաստաթղթերը և ծրագրային նախաձեռնությունները տեղեկատվական հասարակության պայմաններում:

Հետազոտության շրջանակում վերլուծվել են ՀՀ օրենքները, ենթաօրենսդրական ակտերը, կրթության զարգացման պետական ծրագրերը, ինչպես նաև կրթության և գիտության ոլորտի երկարաժամկետ ռազմավարական փաստաթղթերը, ներառյալ «Կրթության մասին» օրենքը[24] (1999 թ.), «Բարձրագույն կրթության և գիտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը[25], «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության

---

[17] Развитие гражданской идентичности в Республике Армения: тенденции, вызовы, риски: коллективная монография / отв. ред. О. Л. Саркисян. – Ереван: Изд-во РАУ, 2023. – 259 с.

[18] Енгоян А. П. Идеологические основы социально-политических трансформаций в постсоветской Армении. – Ереван: Изд-во РАУ, 2011. – 357 с.

[19] Аветисян П. С. Формирование единого образовательного пространства СНГ в условиях глобализации (социально-философская концепция): монография. – Ереван: Изд-во «Гитутюн» НАН РА, 2007. – 376 с.

[20] Мкртчян Л. О. Развитие образования Республики Армения // Проблемы управления. Ереван, 2007. № 3 (24). С. 48–56.

[21] Ալեքսանյան Ա. Ցիվիլիարխիկ դեմոկրատիա. – Երևան: Երևանի համալսարանի հրատարակչություն, 2005. – 86 էջ.

[22] Ордуханян Э. Г. Гражданское образование в Армении. [Электронный ресурс]. – URL: https://eence.eu/ru/profil-stran/grazhdanskoe-obrazovanie-v-armenii/ (дата обращения: 03.03.2025).

[23] Սարոյան Կ. Քաղաքացիական մշակույթ հասկացության սահմանման շուրջ // YSU Journal of International Affairs. 2015. Vol. 6. No. 2 (17). P. 49–59.

[24] ՀՀ Օրենք «Կրթության մասին»: Ընդունված 14.04.1999: [Электронный ресурс]. – URL: https://www.arlis.am/hy/acts/68299 (дата обращения: 25.06.2024).

[25] ՀՀ Օրենք «Բարձրագույն կրթության և գիտության մասին»: Ընդունված 11.09.2025: [Электронный ресурс]. – URL: https://www.arlis.am/hy/acts/214346 (дата обращения: 14.02.2025).

օրենքը [26] Բոլոնիայի հռչակագիրը. Եվրոպական երկրների կրթության նախարարների համատեղ հայտարարություն [27], ՀՀ կառավարության № 926 որոշումը՝ «Թվային Հայաստան» հիմնադրամի ստեղծման մասին[28], Հայաստանի Հանրապետության երկարաժամկետ զարգացման ռազմավարական ծրագիրը (2014–2025 թթ.)[29], ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը[30]:

Էմպիրիկ բազան ներառում է նաև Եվրոպական միության, Ռուսաստանի Դաշնության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կրթական քաղաքականության փաստաթղթեր, Համաշխարհային բանկի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի վերլուծական զեկույցներ, ինչպես նաև միջազգային ինդեքսներ և վիճակագրական տվյալներ: Նշված աղբյուրները դիտարկվում են որպես պետական կրթական քաղաքականության ինստիտուցիոնալացված ձևեր (policy outputs)՝ հնարավորություն տալով բացահայտելու դրա նորմատիվ հիմքերը, առաջնահերթությունները և իրականացման մեխանիզմները թվային վերափոխումների պայմաններում:

Հետազոտության օբյեկտը Հայաստանի Հանրապետության կրթական քաղաքականությունն է տեղեկատվական հասարակության ձևավորման պայմաններում:

Հետազոտության առարկան Հայաստանի Հանրապետության կրթական քաղաքականության ձևավորման և իրականացման հայեցակարգային հիմքերը, սկզբունքները և մեխանիզմներն են տեղեկատվական հասարակության համատեքստում:

---

[26] ՀՀ Օրենք «Տեղեկատվության ազատության մասին»: Ընդունված 15.10.2015 № 1204: [Электронный ресурс]. – URL: http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=1372 (дата обращения: 02.12.2025).

[27] Болонская декларация. Совместное заявление министров образования европейских стран. Болонья, 19 июня 1999 г. [Электронный ресурс]. – URL: https://www.ehea.info (дата обращения: 03.03.2024).

[28] ՀՀ կառավարության որոշում «Թվային Հայաստան» հիմնադրամ ստեղծելու մասին: Ընդունված 03.08.2017 № 926: [Электронный ресурс]. – URL: http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=115232 (дата обращения: 25.12.2025).

[29] ՀՀ 2014–2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր: Ընդունված ՀՀ կառավարության 27.03.2014 № 442 որոշմամբ: [Электронный ресурс]. – URL: http://www.gov.am/am/prsp/ (дата обращения: 13.02.2025).

[30] ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիր: Ընդունված 16.11.2022: [Электронный ресурс]. – URL: https://www.arlis.am/hy/acts/171800 (дата обращения: 15.03.2025).

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակը Հայաստանի Հանրապետության կրթական քաղաքականության հայեցակարգային հիմքերի և սկզբունքների մշակումն է տեղեկատվական հասարակության ձևավորման պայմաններում:

Այս նպատակն իրագործելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- **վերլուծել** կրթական քաղաքականության ուսումնասիրության տեսամեթոդաբանական մոտեցումները քաղաքագիտական գիտության մեջ (ինստիտուցիոնալ, կոնստրուկտիվիստական, համակարգային մոտեցումներ) և ճշգրտել դրա բովանդակությունը որպես պետական քաղաքականության գործիք և քաղաքական կառավարման մեխանիզմ,
- **ուսումնասիրել** կրթական քաղաքականության զարգացումը հասարակության պատմաքաղաքական վերափոխումների համատեքստում՝ բացահայտելով դրա կախվածությունը քաղաքական ռեժիմի տիպից, պետականության մոդելից և սոցիալ-քաղաքական կառուցվածքի բնույթից,
- **բացահայտել** տեղեկատվական հասարակության էական բնութագրերը և վերլուծել դրա ազդեցությունը քաղաքական ինստիտուտների, սոցիալ-քաղաքական հաղորդակցությունների և կրթական քաղաքականության վերափոխման վրա՝ որպես մարդկային կապիտալի և քաղաքական մշակույթի վերարտադրության մեխանիզմ**,**
- **ուսումնասիրել** կրթական քաղաքականության վերափոխումը թվայնացման և գիտելիքահեն տնտեսության ձևավորման պայմաններում՝ ներառյալ գլոբալացման, պլատֆորմիզացիայի և քաղաքական սոցիալականացման մեխանիզմների փոփոխությունների ազդեցությունը**,**
- **հիմնավորել** կրթության ոլորտում պետական ռազմավարության դերը որպես քաղաքացիական կրթության ձևավորման առանցքային գործոն՝ այն դիտարկելով որպես արժեքների, քաղաքացիական նորմերի և քաղաքական մասնակցության մոդելների ինստիտուցիոնալացման մեխանիզմ**,**
- **վերլուծել** Հայաստանի Հանրապետությունում կրթական քաղաքականության ձևավորման և զարգացման քաղաքական-պատմական ու ինստիտուցիոնալ առանձնահատկությունները, ինչպես նաև դրա բարեփոխման գործընթացները հետսովետական վերափոխումների և գլոբալ կրթական տարածքի ինտեգրման պայմաններում**,**
- **մշակել** Հայաստանի Հանրապետության կրթական քաղաքականության կատարելագործման հայեցակարգային հիմքեր և գործնական առաջարկություններ

թվայնացման պայմաններում՝ ուղղված պետական կայունության ապահովմանը, մարդկային կապիտալի զարգացմանը և քաղաքացիական ինքնության ձևավորմանը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը ձևավորվել է փոխլրացնող գիտական մոտեցումների համադրության հենքի վրա, որոնք ապահովում են կրթական քաղաքականության համալիր վերլուծություն:

Առանցքային է կոնստրուկտիվիստական մոտեցումը, որի համաձայն կրթական քաղաքականությունը դիտարկվում է որպես պետության և հասարակության փոխազդեցության արդյունքում ձևավորվող սոցիալ-քաղաքական կառուցվածք: Այն հնարավորություն է տալիս բացահայտել քաղաքացիական ինքնության և արժեքային կողմնորոշումների ձևավորման մեխանիզմները՝ որպես պետական քաղաքականության և սոցիալականացման գործընթացների արդյունք:

Ինստիտուցիոնալ մոտեցումը կիրառվում է կրթական քաղաքականության վերլուծության համար՝ այն դիտարկելով ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտների միջոցով: Այս համատեքստում առանձնացվում են պետական ռազմավարությունը, նորմատիվ-իրավական դաշտը և դրանց ազդեցությունը սոցիալ-քաղաքական հարաբերությունների վերարտադրության վրա:

Համակարգային վերլուծությունը թույլ է տալիս կրթական քաղաքականությունը դիտարկել որպես բարդ, բազմամակարդակ համակարգ, որը ներառում է ինստիտուցիոնալ, նորմատիվ և տեխնոլոգիական բաղադրիչներ՝ փոխկապակցված թվայնացման և գլոբալացման գործընթացների հետ:

Համեմատական մեթոդը կիրառվել է քաղաքացիական կրթության միջազգային մոդելների համադրման համար՝ բացահայտելու դրանց առանձնահատկությունները և գնահատելու դրանց կիրառման հնարավորությունները Հայաստանի պայմաններում:

Կիրառվել է նաև դիսկուրսիվ վերլուծությունը, որը ուղղված է կրթական քաղաքականության արժեքային և իմաստային հիմքերի բացահայտմանը՝ պաշտոնական փաստաթղթերի և փորձագիտական դիսկուրսի ուսումնասիրության միջոցով:

Հետազոտության գիտական նորույթը.

1. Կոնցեպտուալ կերպով ճշգրտվել է «կրթական քաղաքականություն» կատեգորիայի քաղաքագիտական բովանդակությունը, որը մեկնաբանվում է ոչ միայն որպես ոլորտային պետական կարգավորման համակարգ, այլև որպես

քաղաքական համակարգի տարր և կառավարման (governance) գործիք, որը ապահովում է քաղաքականապես նշանակալի արժեքների, քաղաքացիական վարքագծի մոդելների և պետական լեգիտիմության վերարտադրություն՝ թվային փոխակերպումների պայմաններում: Հիմնավորվել է «կրթական քաղաքականություն» և «կրթության ոլորտում պետական քաղաքականություն» հասկացությունների տարանջատումը՝ դրանց գաղափարաարժեքային և ինստիտուցիոնալ-կառավարչական գործառույթների տարբերակման հիման վրա:

2. Հիմնավորվել է կրթական քաղաքականության ընդլայնված ընկալումը՝ որպես քաղաքական կառուցման մեխանիզմ, որը ներառում է քաղաքացիական ինքնության ձևավորման, քաղաքական սոցիալականացման և հասարակության նորմատիվ ինտեգրման գործընթացները:

3. Բացահայտվել և համակարգվել է կրթական քաղաքականության փոխակերպումը ինֆորմատիզացիայի (տեղեկատվայնացման, թվայնացման) ազդեցության ներքո, ներառյալ հարթակային կառույցների, մեծ տվյալների (big data) և ալգորիթմային կառավարման դերի ուժեղացումը: Հստակեցվել է պետության, հասարակության և կրթական ինստիտուտների փոխազդեցության բնույթի փոփոխությունը՝ ցանցային և թվային կառավարման կառուցվածքների շրջանակներում:

4. Թվայնացման պայմաններում մշակվել է քաղաքացիական կրթության քաղաքագիտական տիպաբանություն, որը ներառում է լիբերալ-պլյուրալիստական և պետական-հայրենասիրական մոդելները, ինչպես նաև դրանց հիբրիդ ձևերը: Ցույց է տրվել, որ քաղաքացիական կրթության մոդելների փոխակերպումը պայմանավորված է քաղաքական ռեժիմի բնույթով, պետական ինքնության ռազմավարություններով և կրթական քաղաքականության ինստիտուցիոնալ կենտրոնացվածության մակարդակով:

5. Հաստատվել է քաղաքացիական կրթության բովանդակության կախվածությունը պետական կրթական քաղաքականության կառուցվածքից և քաղաքական-մշակութային համատեքստից: Ցույց է տրվել, որ քաղաքացիական կրթությունը հանդես է գալիս որպես քաղաքական սոցիալականացման գործիք՝ ձևավորելով քաղաքական մասնակցության մոդելներ և լեգիտիմ քաղաքացիական վարքագիծ:

6. Քաղաքագիտական վերլուծության շրջանակներում առաջին անգամ իրականացվել է Հայաստանի Հանրապետության կրթական քաղաքականության հայեցակարգայնացում (կոնցեպտուալիզացիան)՝ որպես state-building (պետականաշինություն) և identity governance (ինքնության կառավարում) գործիք,

որն ուղղված է պետականության ազգային-մշակութային և քաղաքական-արժեքային հիմքերի վերարտադրությանը:

7. Բացահայտվել է սոցիալ-հումանիտար կրթության առանցքային դերը՝ որպես քաղաքական համակարգի տարր, որն ապահովում է քաղաքացիական սուբյեկտության, քննադատական-վերլուծական կարողությունների և քաղաքական ռեֆլեքսիվության ձևավորում: Հիմնավորվել է, որ սոցիալ-հումանիտար առարկաները հանդես են գալիս որպես քաղաքական իրականության մեկնաբանման մոդելների արտադրության և քաղաքական սոցիալականացման գործիք տեղեկատվական հասարակության պայմաններում:

8. Հիմնավորվել է, որ հետխորհրդային պետությունների կրթական քաղաքականության հիբրիդայնությունը ներկայացնում է կայուն ինստիտուցիոնալ կառուցվածք, այլ ոչ թե դասական մոդելներից մեկի ուղղությամբ անցումային վիճակ: Ցույց է տրվել, որ այս կոնֆիգուրացիան որոշված է պետականաշինության և գլոբալ տեղեկատվական տարածք ինտեգրման գործընթացների միաժամանակյայնությամբ, ինչը թույլ է տալիս տեսականորեն հիմնավորել փոքր պետությունների կրթական քաղաքականության առանձնահատկությունը, որոնք գործում են թվային փոխակերպման և աշխարհաքաղաքական անկայունության պայմաններում:

Հետազոտության տեսական և կիրառական նշանակությունը:

Մշակված մոտեցումները և քաղաքացիական կրթության տիպաբանությունը ընդլայնում են պետություն–հասարակություն փոխհարաբերությունների ուսումնասիրման տեսամեթոդաբանական հիմքերը թվայնացման պայմաններում: Հետազոտությունը զարգացնում է կրթական քաղաքականության՝ որպես քաղաքացիական ինքնության ձևավորման և քաղաքական համակարգի արժեքային հիմքերի վերարտադրության գործիքի ընկալումը:

Հետազոտության գործնական նշանակությունը պայմանավորված է դրանց կիրառելիությամբ Հայաստանի Հանրապետության կրթական քաղաքականության կատարելագործման գործընթացում, կրթական ռազմավարությունների մշակման և համալսարանների զարգացման քաղաքականությունների ձևավորման ժամանակ:

Նյութերը կարող են օգտագործվել նաև քաղաքագիտության և քաղաքացիական կրթության դասընթացների մշակման, ինչպես նաև կրթական և կառավարչական կադրերի պատրաստման համակարգում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնադրույթներն ու եզրակացությունները ներկայացվել և քննարկվել են Ռուս-Հայկական համալսարանի Կ. Միրումյանի անվ. քաղաքագիտության ամբիոնում: Ատենախոսության մեջ մշակված մոտեցումներն ու դրույթները օգտագործվել են Ռուս-Հայկական համալսարանում «Քաղաքագիտություն», «Քաղաքական սոցիոլոգիա» և «Քաղաքական տեսություն» դասընթացների մշակման և դասավանդման ժամանակ, ինչպես նաև մի շարք միջազգային գիտաժողովների, կլոր սեղանների և սեմինարների զեկույցներում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են գիտական տասներկու հոդվածում (8-ը՝ ՀՀ և ՌԴ ԲՈԿ-երի կողմից ընդունելի գիտական պարբերականներում, 4-ը՝ գիտաժողովի նյութերի ժողովածուներում):

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ ինը ենթագլուխներով, վերջաբանից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսությունը կազմված է 163 էջից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են ուսումնասիրության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, ատենախոսության մշակվածության աստիճանը, գիտական նորույթը, մեթոդաբանական հիմքերը, տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության **առաջին՝ «Հետազոտության տեսամեթոդաբանական և պատմական հիմքերը»** գլխում վերլուծվում են կրթական քաղաքականության տեսամեթոդաբանական հիմքերը, պատմական էվոլյուցիան և տեղեկատվական հասարակության ձևավորման պայմաններում կրթական քաղաքականության զարգացման առանձնահատկությունները:

1.1. «Կրթական քաղաքականություն հասկացության ուսումնասիրության տեսամեթոդաբանական հիմքերը» ենթագլխում ուսումնասիրվել է կրթության դերը որպես հասարակության զարգացման և վերարտադրության առանցքային գործոն, որը միաժամանակ ձևավորում է անհատի գիտելիքային, արժեքային և քաղաքացիական կողմնորոշումները:

Կրթական քաղաքականությունը ներկայացվում է որպես բազմաշերտ սոցիալ-քաղաքական երևույթ, որը ներառում է կարգավորիչ, արժեքային-նորմատիվ և ինտեգրացիոն գործառույթներ: Այն սերտորեն կապված է պետական քաղաքականության հետ, սակայն ունի ավելի լայն գաղափարաարժեքային բովանդակություն՝ ուղղված քաղաքացիական գիտակցության և քաղաքական մշակույթի ձևավորմանը:

Կոնստրուկտիվիստական, ինստիտուցիոնալ և համակարգային մոտեցումների համադրությունը թույլ է տալիս կրթական քաղաքականությունը դիտարկել որպես բազմամակարդակ համակարգ, որը տեղեկատվական հասարակության պայմաններում վերածվում է ոչ միայն պետական կառավարման ոլորտի, այլև սոցիալական իրականության, արժեքների և քաղաքացիական գիտակցության ձևավորման հիմնական հարթակի:

1.2. «Կրթական քաղաքականությունը հասարակական վերափոխումների պատմության մեջ» ենթագլխում բացահայտվում է կայուն օրինաչափություն. ավանդական հասարակությունում կրթական քաղաքականությունը կրել է սակրալ-նորմատիվ բնույթ, արդյունաբերական դարաշրջանում ձեռք է բերել ինստիտուցիոնալ-պետական բնույթ՝ դառնալով քաղաքացիական ինքնության ձևավորման և ազգային կառուցման գործիք, իսկ հետարդյունաբերական հասարակությունում վերափոխվել է ռազմավարական-նորարարական մոդելի՝ միտված կոմպետենցիաների զարգացմանը և շարունակական կրթությանը:

Ցույց է տրվում, որ յուրաքանչյուր ժամանակաշրջանում պետությունը հետևողականորեն ուժեղացրել է իր դերը՝ օգտագործելով կրթությունը որպես քաղաքական սոցիալականացման և իշխանության լեգիտիմության ամրապնդման մեխանիզմ: Ապացուցվում է, որ հետարդյունաբերական հասարակությանն անցումը ուղեկցվում է կրթական քաղաքականության ցանցային բնույթով, որտեղ պետության հետ մեկտեղ ակտիվ դերակատարներ են դառնում քաղաքացիական հասարակությունը, մասնավոր հատվածը և միջազգային կազմակերպությունները:

1.3. «Տեղեկատվական հասարակության հիմնարար բնութագրերը և տեսական մոդելները» ենթագլխում վերլուծվում են տեղեկատվական հասարակության հայեցակարգային հիմքերը Դ. Բելի, Մ. Կաստելսի, Գ. Մ. Մաքլյուենի, Ֆ. Ուեբսթերի և այլ հեղինակների աշխատություններում: Բացահայտվում է, որ տեղեկատվական հասարակության զարգացման հիման վրա ձևավորվում են երեք հիմնական մոդելներ՝ ամերիկյան, եվրոպական և արևելասիական, որոնք տարբերվում են պետական կարգավորման աստիճանով, շուկայական և հանրային-իրավական մեխանիզմների հարաբերակցությամբ:

Ժամանակակից փուլում տեղեկատվական հասարակությունը վերածվում է թվային հասարակության, որտեղ տվյալները, ալգորիթմները և թվային հարթակները դառնում են հասարակական գործընթացների հիմնական կարգավորիչներ: Տեղեկատվական հասարակությունը ներկայացվում է որպես բազմաշերտ համակարգ, որտեղ տեխնոլոգիական, քաղաքական և սոցիալ-մշակութային գործոնները փոխկապակցված են և միասին ձևավորում են զարգացման նոր փուլ:

Ատենախոսության երկրորդ՝ «Տեղեկատվական հասարակությունում կրթական քաղաքականության ժամանակակից միտումները և առաջնահերթությունները» գլուխը նվիրված է տեղեկատվական հասարակության պայմաններում կրթական քաղաքականության ժամանակակից միտումների և առաջնահերթությունների ուսումնասիրությանը: Այն ընդգրկում է քաղաքական և

սոցիալ-մշակութային տարածքի փոխակերպումների, կրթական հարացույցի փոփոխության և քաղաքացիական կրթության ձևավորման գործընթացում պետական ռազմավարության դերի վերլուծությունը:

2.1. «Տեղեկատվական հասարակության ձևավորման գործընթացում քաղաքական և սոցիալ-մշակութային տարածքի փոխակերպումը» ենթագլխում հենվելով Է. Գիդդենսի, Ու. Բեկի, Մ. Կաստելսի, Շ. Զուբոֆի և Ժ. Բոդրիյարի հայեցակարգերի վրա ցույց է տրվում, որ թվայնացումը ուղեկցվում է իշխանության մեխանիզմների, քաղաքական մասնակցության ձևերի և սոցիալական փոխազդեցության մոդելների վերափոխմամբ: Բացահայտվում է, որ ցանցային կառուցվածքների տարածումը ստեղծում է նոր հնարավորություններ քաղաքացիական մասնակցության համար, սակայն միաժամանակ առաջացնում է ալգորիթմական վերահսկողության, հսկող կապիտալիզմի և թվային անհավասարության ռիսկեր:

Արձանագրվում է անհատի սոցիալական գոյության տրանսֆորմացիան՝ կլիպային մտածողության ձևավորում, ինքնության տրոհում (ֆրագմենտացիա), «թվային մարդու» ֆենոմենի տարածում և օտարման նոր ձևերի ի հայտ գալը հաղորդակցությունների պլատֆորմացման պայմաններում: Հաստատվում է, որ նշված գործընթացները պայմանավորում են ավանդական կրթական համակարգերի ճգնաժամը, որոնք անկարող են համարժեք արձագանքել թվային միջավայրի մարտահրավերներին, ինչը արդիականացնում է պետական կրթական քաղաքականության նպատակների և բովանդակության վերաիմաստավորման անհրաժեշտությունը՝ որպես տեղեկատվական սպառնալիքների պայմաններում հասարակության քաղաքական կայունության ձևավորման գործիք:

2.2. «Կրթական քաղաքականությունը տեղեկատվական հասարակությունում կրթական հարացույցի փոփոխության համատեքստում» ենթագլխում ուսումնասիրվում են կրթական քաղաքականության տրանսֆորմացիան՝ դասական գիտելիքակենտրոն հարացույցից դեպի նորարարական՝ կոմպետենցիոն հարացույցի անցման պայմաններում: Բացահայտվում է պատրաստի գիտելիքի փոխանցումից դեպի առանցքային կոմպետենցիաների ձևավորման անցման բովանդակությունը՝ քննադատական մտածողություն, թվային գրագիտություն, ինքնուսուցման կարողություն և հասարակական-քաղաքական կյանքում գիտակցված մասնակցություն:

Վերհանվում են համակարգային խնդիրները, որոնք խոչընդոտում են նոր հարացույցի իրագործմանը՝ կրթական համակարգերի ինստիտուցիոնալ իներտություն, ռեսուրսների պակասություն, մանկավարժական կադրերի անբավարար պատրաստվածություն նորարարություններին, թվային անհավասարություն և տեղեկատվական գերծանրաբեռնվածություն: Հիմնավորվում է, որ տվյալ պայմաններում պետական կրթական քաղաքականությունը ձեռք է բերում ռազմավարական բնույթ՝ հանդես գալով ոչ միայն որպես կրթական համակարգի հարմարեցման գործիք տեղեկատվական հասարակության պահանջներին, այլև որպես նոր կրթական հարացույցի

ձևավորման ակտիվ գործոն՝ ուղղված անհատի քաղաքացիական գիտակցության և քաղաքական մշակույթի զարգացմանը:

2.3. «Պետական ռազմավարության դերը որպես քաղաքացիական կրթության ձևավորման գործոն տեղեկատվական հասարակությունում» քննարկվում է պետական ռազմավարության դերը տեղեկատվական հասարակության պայմաններում քաղաքացիական կրթության ձևավորման գործընթացում՝ որպես քաղաքական սոցիալականացման, արժեքային կողմնորոշումների ամրապնդման և քաղաքացիության մոդելի վերարտադրության կարևոր գործոն:

Թվային տեխնոլոգիաների զարգացումը ընդլայնում է պետության և քաղաքացիների փոխգործակցությունը՝ ապահովելով տեղեկատվական արագ շրջանառություն և մասնակցության նոր ձևեր, սակայն միաժամանակ ուժեղացնում է նաև վերահսկողական և տեղեկատվական հակասությունների ռիսկերը: Այս պայմաններում քաղաքացիական կրթությունը ձեռք է բերում երկակի բնույթ՝ միաժամանակ խթանելով մասնակցությունը և ծառայելով որպես պետական ռազմավարությամբ պայմանավորված արժեքային կարգավորման միջոց:

Առանձնացվում են քաղաքացիական կրթության երկու հիմնական մոդելներ՝ լիբերալ-պլյուրալիստական և պետական-հայրենասիրական: Լիբերալ-պլյուրալիստական մոդելը (Գերմանիա, Կանադա, Ֆինլանդիա, Էստոնիա) հիմնված է բազմակարծության և մասնակցային ժողովրդավարության վրա, սակայն բախվում է ապատեղեկատվության և բևեռացման խնդիրներին՝ ընդգծելով թվային գրագիտության նշանակությունը: Պետական-հայրենասիրական մոդելը (Չինաստան, Ռուսաստան) առանձնանում է պետության ակտիվ դերակատարմամբ՝ քաղաքացիական ինքնության ձևավորման մեջ՝ հիմնված հայրենասիրության, պատմական հիշողության և քաղաքական լոյալության վրա:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ «Հայաստանի Հանրապետության կրթական քաղաքականության հիմնական առաջնահերթությունները տեղեկատվական հասարակության պայմաններում», վերլուծում է ՀՀ կրթական քաղաքականությունը երեք փոխկապակցված հարթություններում՝ պատմաքաղաքագիտական, ինստիտուցիոնալ-բարեփոխչական և արժեքային-քաղաքական: Բացահայտվում են հռչակված նպատակների և դրանց իրականացման մեխանիզմների միջև առկա հակասությունները, ինչպես նաև հիմնավորվում է սոցիալ-հումանիտար կրթության համալիր պետական ռազմավարության մշակման անհրաժեշտությունը՝ որպես քաղաքացիական գիտակցության և կայուն քաղաքացիական ինքնության ձևավորման նախապայման:

3.1. «Հայաստանի կրթական քաղաքականության զարգացման քաղաքական-պատմական ասպեկտը» ենթագլխում դիտարկվում է Հայաստանում կրթական քաղաքականության զարգացման քաղաքական-պատմական հարթությունը: Պատմաքաղաքագիտական վերլուծության հիման վրա ցույց է տրվում, որ կրթությունը հայ ժողովրդի ամբողջ պատմության

ընթացքում հանդես է եկել ոչ միայն որպես գիտելիքի փոխանցման մեխանիզմ, այլև նաև ազգային ինքնության, մշակութային անկախության և պետականության պահպանման կարևորագույն գործիք: Հայոց գրերի ստեղծումը, ազգային դպրոցների զարգացումը, մտավորական վերնախավի գործունեությունը մեկնաբանվում են որպես ազգի հոգևոր-մշակութային ինքնապաշտպանության նպատակաուղղված քաղաքականություն:

Խորհրդային ժամանակաշրջանը ամրագրեց համընդհանուր կրթությունը, սակայն այն ենթարկեց գաղափարախոսական խնդիրներին, իսկ անկախության ձեռքբերումից հետո կրթական համակարգը հայտնվեց խոր ճգնաժամի պայմաններում՝ պայմանավորված հետխորհրդային վերափոխումներով և նոր քաղաքացիական ու պետական ինքնության ձևավորման համատեքստում դրա արժեքային-նորմատիվ հիմքերի վերաիմաստավորման անհրաժեշտությամբ:

3.2. «Հայաստանի Հանրապետությունում կրթական համակարգի բարեփոխումները տեղեկատվական հասարակության ձևավորման համատեքստում» ենթագլխում վերլուծվում է Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի բարեփոխման գործընթացը հետխորհրդային շրջանում՝ տեղեկատվական հասարակության ձևավորման համատեքստում:

Հետևողականորեն ներկայացվում է կրթական քաղաքականության նորմատիվ-իրավական բազայի զարգացումը՝ հետխորհրդային շրջանի առաջին օրենսդրական ակտերից և Բոլոնիայի գործընթացին միանալուց մինչև թվայնացման ոլորտում ռազմավարական փաստաթղթերի և Կրթության զարգացման պետական ծրագրի ընդունումը մինչև 2030 թվականը:

Միաժամանակ բացահայտվում է պետական քաղաքականության հռչակված նպատակների և դրանց ինստիտուցիոնալ իրականացման մեխանիզմների միջև առկա անհամապատասխանությունը, որը դրսևորվում է թվային վերափոխումների հատվածական բնույթով և մի շարք բարեփոխումների իմիտացիոն բնույթով:

Արվում է եզրակացություն, որ Հայաստանի կրթական քաղաքականությունը ներկայացնում է հիբրիդային մոդել, որը համադրում է լիբերալ-դեմոկրատական, կոմպետենտային-թվային և պետական-հայրենասիրական կողմնորոշումները, ինչը արտացոլում է տեղեկատվական հասարակության ձևավորման պայմաններում հետխորհրդային պետականաշինության տրամաբանությունը:

3.3. «Տեղեկատվական հասարակության պայմաններում ՀՀ կրթական քաղաքականության արժեքային սոցիալ-քաղաքական կողմնորոշումները» ենթագլխում կրթական պրակտիկաների և նորմատիվ-իրավական փաստաթղթերի քաղաքագիտական վերլուծության հիման վրա ցույց է տրվում, որ քաղաքացիական կրթության հայկական մոդելը կրում է արտահայտված հիբրիդային բնույթ՝ համադրելով լիբերալ-պլյուրալիստական, կոմպետենտային-թվային և պետական-հայրենասիրական մոտեցումներ, որոնցից ոչ մեկը չի ստացել համակարգային ինստիտուցիոնալ ամրագրում:

Վերլուծվում է Հայաստանում քաղաքացիական հասարակության և քաղաքացիական մշակույթի վիճակը, բացահայտվում են դրանց զարգացման

կառուցվածքային սահմանափակումները՝ քաղաքական ինստիտուտների նկատմամբ հասարակական վստահության ցածր մակարդակը, քաղաքացիների պասիվ ներգրավվածությունը քաղաքական մասնակցության գործընթացներում:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում սոցիալ-հումանիտար կրթության դերին՝ որպես քաղաքացիական գիտակցության, քաղաքական մշակույթի և հասարակության կայունության ձևավորման առանցքային մեխանիզմի տեղեկատվական սպառնալիքների և ապատեղեկատվության պայմաններում:

Վերլուծության արդյունքներով հիմնավորվում է սոցիալ-հումանիտար կրթության համալիր պետական ռազմավարության մշակման անհրաժեշտությունը, որը պետք է ներառի ինստիտուցիոնալացում, բովանդակության արդիականացում, կրթական պրակտիկաների վերափոխում՝ որպես տեղեկատվական հասարակության պայմաններում կայուն ժողովրդավարական պետության կառուցման նախապայման:

Ատենախոսության «**Եզրակացություն**» բաժնում արտացոլված են հետազոտության տեսական և կիրառական նշանակություն ունեցող հիմնական արդյունքները, որոնցից ամենակարևոր եզրահանգումները հետևյալներն են.

1. Տեսամեթոդաբանական վերլուծության հիման վրա ճշգրտվել է «կրթական քաղաքականություն» կատեգորիայի քաղաքական բովանդակությունը, որը մեկնաբանվում է ոչ միայն որպես առանձին ոլորտի կարգավորման ուղղություն, այլ որպես քաղաքական համակարգի կառուցվածքային տարր, որն ապահովում է քաղաքականապես նշանակալի արժեքների, քաղաքացիական վարքագծի մոդելների վերարտադրությունը: Հիմնավորվել է «կրթական քաղաքականություն» և «կրթության ոլորտում պետական քաղաքականություն» հասկացությունների տարբերակումը՝ դրանց գաղափարաարժեքային և ինստիտուցիոնալ-վարչական գործառույթների տարբերությունների հիմքով: Ցույց է տրվել, որ կրթական քաղաքականությունը բազմամակարդակ քաղաքական-ինստիտուցիոնալ համակարգ է, որը ներառում է նորմատիվ-իրավական, արժեքային և սոցիալ-մշակութային բաղադրիչներ:

2. Սահմանվել է, որ կրթական քաղաքականության վերլուծությունը պահանջում է կոնստրուկտիվիստական, ինստիտուցիոնալ և համակարգային մոտեցումների ինտեգրում: Գիտական գրականության և կրթական պրակտիկաների վերլուծության հիման վրա ցույց է տրվել, որ կրթական քաղաքականությունը գործում է որպես քաղաքական կառուցման մեխանիզմ, որը ներառում է քաղաքացիական-քաղաքական ինքնության ձևավորման, քաղաքական սոցիալականացման և հասարակության նորմատիվ ինտեգրման գործընթացները:

3. Համեմատական վերլուծության հիման վրա բացահայտվել է կրթական քաղաքականության փոխակերպումը թվայնացման պայմաններում, որը դրսևորվում է կառավարման հարթակային ձևերի ինստիտուցիոնալացմամբ, մեծ տվյալների օգտագործման ընդլայնմամբ և ալգորիթմական կարգավորման մեխանիզմների ներդրմամբ: Սահմանվել է, որ այս գործընթացները էականորեն

փոխակերպում են պետության, հասարակության և կրթական ինստիտուտների փոխազդեցության բնույթը՝ ձևավորելով ցանցային կառավարման կառուցվածքներ: Հիմնավորվել է, որ նշված փոփոխությունները ուղեկցվում են սոցիալական անհավասարության խորացման, թվային վերահսկողության և օտարման ռիսկերով, ինչը առաջացնում է կրթական տարածքի նպատակային պետական կարգավորման անհրաժեշտությունը:

4. Մշակվել է քաղաքագիտական տիպաբանություն քաղաքացիական կրթության մոդելների վերաբերյալ, որը ներառում է լիբերալ-պլյուրալիստական և պետական-հայրենասիրական մոդելները, ինչպես նաև դրանց հիբրիդային ձևերը: Գերմանիայի, Ֆինլանդիայի, Էստոնիայի, Ռուսաստանի Դաշնության և Չինաստանի օրինակների համեմատական վերլուծության հիման վրա սահմանվել է, որ քաղաքացիական կրթության մոդելների կառուցվածքը կայուն կախվածություն ունի քաղաքական համակարգի արժեքային հիմքերից, պետական ինքնության ձևավորման ռազմավարություններից և կրթական քաղաքականության ինստիտուցիոնալ կենտրոնացվածության մակարդակից:

5. Սահմանվել է, որ քաղաքացիական կրթության բովանդակությունը կայուն կախվածություն ունի պետական կրթական քաղաքականության բնութագրերից և քաղաքական-մշակութային համատեքստից: Նորմատիվ փաստաթղթերի և կրթական ծրագրերի վերլուծության հիման վրա ցույց է տրվել, որ քաղաքացիական կրթությունը գործում է որպես քաղաքական սոցիալականացման գործիք, որի միջոցով ձևավորվում են քաղաքական մասնակցության մոդելներ և քաղաքացիական վարքագծի լեգիտիմ ձևեր: Հիմնավորվել է, որ դիտարկված դեպքերի մեծ մասում պետությունը պահպանում է առաջատար դերը քաղաքացիական կրթության նորմատիվ և ինստիտուցիոնալ շրջանակների սահմանման գործում:

6. Ռազմավարական փաստաթղթերի և ինստիտուցիոնալ պրակտիկաների վերլուծության հիման վրա Հայաստանի Հանրապետության կրթական քաղաքականությունը հայեցակարգայնացվում է որպես պետականաշինության (state-building) և ինքնության կառավարման (identity governance) գործիք, որը ուղղված է ազգային-մշակութային և քաղաքացիական-քաղաքական ինքնության վերարտադրությանը: Սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության կրթական քաղաքականությունը կրում է հիբրիդային բնույթ՝ համադրելով լիբերալ-դեմոկրատական, կոմպետենտային-թվային և պետական-հայրենասիրական կողմնորոշումներ: Ցույց է տրվել, որ այս կառուցվածքը արտացոլում է հետխորհրդային զարգացման առանձնահատկությունները և ապահովում է ինստիտուցիոնալ հավասարակշռություն ժողովրդավարացման խնդիրների և ազգային ինքնության ամրապնդման միջև՝ դրանք դիտարկելով ոչ թե որպես հակադիր, այլ որպես փոխլրացնող գործընթացներ:

7. Բացահայտվել է սոցիալ-հումանիտար կրթության համակարգաստեղծ դերը՝ որպես քաղաքական համակարգի տարր, որն ապահովում է քաղաքացիական սուբյեկտիվության, քննադատավերլուծական

կոմպետենցիաների և անհատի քաղաքական ռեֆլեքսիվության ձևավորումը: Ցույց է տրվել, որ սոցիալ-հումանիտար առարկաները գործում են որպես քաղաքական իրականության մեկնաբանական մոդելների արտադրության մեխանիզմ և քաղաքական սոցիալականացման գործիք, որն ապահովում է հասարակության կայունությունը տեղեկատվական շահարկումների և ապատեղեկատվության նկատմամբ:

8. Հիմնավորվել է, որ հետխորհրդային պետությունների կրթական քաղաքականության հիբրիդայնությունը ներկայացնում է կայուն ինստիտուցիոնալ կառուցվածք, այլ ոչ թե անցումային վիճակ, ինչը հնարավորություն է տալիս տեսականորեն հիմնավորել փոքր պետությունների կրթական քաղաքականության առանձնահատկությունները, որոնք միաժամանակ իրականացնում են պետականաշինություն և ինտեգրում գլոբալ տեղեկատվական տարածք:

Ընդհանուր առմամբ, հետազոտության արդյունքները ձևավորում են կրթական քաղաքականության հետագա վերլուծության տեսամեթոդաբանական հիմքը թվայնացման պայմաններում, ներառյալ հետխորհրդային պետությունների համեմատական հետազոտությունները, ինքնության թվային կառավարման մեխանիզմների ուսումնասիրությունը և քաղաքացիական կրթության հարմարվողական մոդելների մշակումը փոքր պետությունների պայմաններին, որոնք գործում են աշխարհաքաղաքական անկայունության պայմաններում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում.

1. Аветисян П. С., Арутюнян М. Л. Кризис системы образования РА в контексте мирового кризиса образования // Шестая годичная научная конференция (5–9 декабря 2011 г.): сборник научных статей: в 2 ч. Ч. 2. Ереван: Изд-во РАУ, 2012. С. 515–533.

2. Арутюнян М. Л. Смена образовательной парадигмы в информационном обществе // Вестник РАУ (серия: гуманитарные и общественные науки). Ереван: Изд-во РАУ, 2014. № 3 (18). С. 40–50.

3. Арутюнян М. Л. Риски, обусловленные трансформацией социально-политического пространства в современном информационном обществе // Risks and Safety in a Rapidly Changing World: Materials of the II International Scientific Conference (May 10–11). Prague: Sociosfera-SZ, 2014. P. 7–11.

4. Арутюнян М. Л. Национальная безопасность в контексте формирования информационного общества (образовательный аспект) // Проблемы национальной безопасности в условиях глобализации (междисциплинарные аспекты): материалы республиканской научной конференции. Ереван: Изд-во РАУ, 2015. С. 169–179.

5. Арутюнян М. Л. Образование и культурное наследие как основополагающие факторы сохранения национально-культурной идентичности // Вестник РАУ (серия: гуманитарные и общественные науки). Ереван: Изд-во РАУ, 2015. № 2 (20). С. 53–62.

6. Арутюнян М. Л. Трансформация социально-культурного и политического пространства в процессе становления информационного общества РА // Десятая годичная научная конференция (30 ноября – 4 декабря 2015 г.): сборник научных статей. Социально-гуманитарные науки. Ч. III. Ереван: Изд-во РАУ, 2016. С. 591–598.
7. Арутюнян М. Л. О соотношении понятий «образовательная политика» и «государственная политика в сфере образования» // Вестник РАУ (серия: гуманитарные и общественные науки). Ереван: Изд-во РАУ, 2016. № 3 (24). С. 16–24.
8. Арутюнян М. Л. Пути формирования единого образовательного пространства в рамках Евразийского экономического союза // Вестник Ереванского государственного университета языков и социальных наук имени В. Брюсова. 2016. № 2 (37). Ереван: Лингва. С. 95–116.
9. Арутюнян М. Л. Пути повышения эффективности и конкурентоспособности системы высшего образования РА в условиях формирования информационного общества // Вестник РАУ (серия: гуманитарные и общественные науки). Ереван: Изд-во РАУ, 2018. № 1 (28). С. 95–106.
10 Арутюнян М. Л. Государственная политика Республики Армения в области реформирования системы образования в условиях формирования информационного общества // Регион и мир. 2022. Т. 13. № 6. С. 31–38.
11. Սարգսյան Հ. Լ., Հարությունյան Մ. Լ. Հասարակագիտության առարկայի դերը Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության զարգացման համատեքստում // Вестник РАУ (серия: гуманитарные и общественные науки). Ереван: Изд-во РАУ, 2022. № 3. С. 200–212.
12. Арутюнян М.Л. Образовательная политика как объект политического анализа: конструктивистский и системный подходы // Вестник (серия: гуманитарные и общественные науки). Ереван: Изд-во РАУ, № 4. 2025 С.167-181.

АРУТЮНЯН МАРИАННА ЛЕВОНОВНА

«КОНЦЕПТУАЛЬНЫЕ ОСНОВЫ ОБРАЗОВАТЕЛЬНОЙ ПОЛИТИКИ РА В КОНТЕКСТЕ ФОРМИРОВАНИЯ ИНФОРМАЦИОННОГО ОБЩЕСТВА»

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук
по специальности 23.00.01 - «Теория политической науки»
Защита состоится 28 августа 2026 г. в 13:00
на заседании действующего в ЕГУ специализированного совета
056 «Политология и международные отношения»
МОНКС КВОН РА
(адрес: РА, г. Ереван, 0025, Алека Манукяна 1).

РЕЗЮМЕ

Диссертационное исследование посвящено анализу образовательной политики в условиях формирования информационного общества, где радикальные трансформации социально-коммуникативных структур существенно изменяют механизмы управления, политического участия и социального взаимодействия. В этих условиях образование приобретает стратегический характер, выступая ключевым инструментом формирования гражданского сознания, политической культуры и обеспечения устойчивости социально-политической системы.

Актуальность работы обусловлена ростом информационных рисков, включая распространение дезинформации, фрагментацию общественного сознания и снижение доверия к государственным институтам. Это актуализирует проблему формирования критического восприятия информации, ответственного гражданского поведения и политической компетентности. Особое значение приобретает социально-гуманитарное образование как основа интерпретации социальной реальности и формирования гражданской идентичности.

Для Республики Армения актуальность исследования усиливается наличием разрыва между динамикой социально-политических трансформаций и адаптационными возможностями образовательной системы, а также ограниченной связью образования с рынком труда и экономикой знаний. Дополнительными вызовами выступают фрагментарный характер реформ, частичная заимствованность внешних образовательных моделей и кризис доверия к государственным институтам.

Целью данной исследовательской работы является разработка концептуальных основ и принципов образовательной политики Республики Армения в условиях становления информационного общества.

Во «Введении» обосновывается выбор темы и ее актуальность, определены объект и предмет, цель и задачи, а также методологические основания исследования. Представлены степень научной разработанности темы,

эмпирическая база исследования, научная новизна, теоретическая и практическая значимость исследования.

В первой главе диссертации «Теоретико-методологические и исторические основы исследования» анализируются теоретико-методологические основания образовательной политики, ее историческая эволюция, а также особенности развития образовательной политики в условиях формирования информационного общества.

Вторая глава работы «Современные тенденции и приоритеты образовательной политики в информационном обществе» посвящена исследованию современных тенденций и приоритетов образовательной политики в условиях формирования информационного общества. В ней рассматриваются трансформации политического и социокультурного пространства, изменения образовательной парадигмы, а также роль государственной стратегии в процессе формирования гражданского образования. Особое внимание уделяется влиянию цифровизации на политическое управление и социальные взаимодействия, необходимости модернизации образовательной системы, а также формированию новых моделей взаимодействия государства, образования и общества в условиях информационного общества.

В третьей главе диссертации «Основные приоритеты образовательной политики Республики Армения в условиях информационного общества» анализируется образовательная политика Республики Армения в условиях формирования информационного общества в трех взаимосвязанных измерениях. В историко-политологическом разрезе рассматривается роль образования как инструмента сохранения национальной идентичности и государственности на протяжении многовековой истории армянского народа. Далее анализируется процесс реформирования образовательной системы РА в постсоветский период от институциональных преобразований до формирования цифровой повестки, выявляются противоречия между декларируемыми целями и реальными механизмами их реализации. В заключительном параграфе исследуются ценностные социально-политические ориентиры образовательной политики Армении и обосновывается необходимость разработки комплексной государственной стратегии социально-гуманитарного образования как условия формирования гражданского сознания, культуры и устойчивой гражданской идентичности в условиях информационного общества.

В «Заключении» отражены основные результаты исследования, имеющие теоретическое и практическое значение.

MARIANNA HARUTYUNYAN

"Conceptual Foundations of the Educational Policy of the Republic of Armenia in the Context of the Formation of the Information Society"

Dissertation submitted for the degree of Candidate of Political Sciences
Specialty 23.00.01 – «Theory of Political Science»

The defense will take place on August 28, 2026, at 13:00
at the Specialized Council 056 "Political Science and International Relations"
operating at Yerevan State University,
Ministry of Education, Science, Culture and Sports of the Republic of Armenia
(Address: 1 Alex Manoogian St., Yerevan, 0025, Republic of Armenia).

SUMMARY

The dissertation is devoted to the analysis of educational policy in the context of the formation of the information society, where radical transformations of socio-communicative structures significantly alter mechanisms of governance, political participation, and social interaction. In these conditions, education acquires a strategic character, acting as a key instrument for the formation of civic consciousness, political culture, and the sustainability of the socio-political system.

The relevance of the study is conditioned by growing information risks, including the spread of disinformation, fragmentation of public consciousness, and declining trust in state institutions. These processes underscore the importance of critical information perception, responsible civic behavior, and political competence. Social and humanitarian education becomes especially significant as a foundation for interpreting social reality and shaping civic identity.

For the Republic of Armenia, the relevance of the study is further intensified by the gap between the dynamics of socio-political transformations and the adaptive capacity of the educational system, as well as the weak linkage between education, the labor market, and the knowledge economy. Additional challenges include the fragmented nature of reforms, partial borrowing of external educational models, and a crisis of trust in state institutions.

The aim of the study is to develop the conceptual foundations and principles of educational policy of the Republic of Armenia in the context of the formation of the information society.

The Introduction substantiates the choice and relevance of the topic, defines the object, subject, aim, and objectives of the study, as well as its methodological foundations. It also presents the degree of scholarly development of the topic, the empirical basis, scientific novelty, and the theoretical and practical significance of the research.

The first chapter, «Theoretical-Methodological and Historical Foundations of the Study», analyzes the theoretical and methodological foundations of educational policy, its historical evolution, and the features of its development in the context of the formation of the information society.

The second chapter, «Current Trends and Priorities of Educational Policy in the Information Society», examines contemporary trends and priorities of educational policy under conditions of the information society. It analyzes transformations of the political and socio-cultural space, changes in the educational paradigm, and the role of state strategy in the formation of civic education. Special attention is paid to the impact of digitalization on political governance and social interactions, the need for modernization of the educational system, and the formation of new models of interaction between the state, education, and society.

The third chapter, «Main Priorities of the Educational Policy of the Republic of Armenia in the Conditions of the Information Society», analyzes the educational policy of the Republic of Armenia through three interrelated dimensions. From a historical and political perspective, the role of education as an instrument for preserving national identity and statehood throughout the centuries-long history of the Armenian people is examined. The chapter further analyzes the process of reforming the educational system of the Republic of Armenia in the post-Soviet period, from institutional transformations to the formation of a digital agenda, revealing the contradictions between the declared goals and the actual mechanisms of their implementation. The concluding section explores the value-based socio-political orientations of Armenia's educational policy and substantiates the necessity of developing a comprehensive state strategy for social and humanitarian education as a prerequisite for the formation of civic consciousness, culture, and a stable civic identity in the conditions of the information society.

The Conclusion presents the main findings of the research, which carry both theoretical and practical significance for the further development of educational policy in the Republic of Armenia in the context of the formation of the information society.